№ 13 Յունվարի 27 (Փետրվարի 8) 1881 Յունվարի 27 (Փետրվարի 8) № 13

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Ոտարարտադրացիր տիտում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ"
ԼՐԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ
1881 թուին

(ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Կը հրատարակվի նոյն գիրքով և նոյն պրոգրամմայով ԱՄԵՆ ՕՐ (բացի տօն և տօներին հետեւեալ օրերից)։

ՊՐՈԳՐԱՄՄԱ։ I. Տերութեան կարգադրութիւններ, II Աւաջնորդող յօդուածներ, III Ներքին տեսութիւն, IV Արտաքին տեսութիւն, V Խառն լուրեր, VI Հեռագիրներ, VII Ֆելիետոն և Բանասիրական, VIII Յայտարարութիւններ։

ԼՐԱԳՐԻ ԳԻՆԸ, տարեկան 10 ռուբլ, կէս տարվան 6 ռ., հինգ ամս. 5 ռ., չորս ամս. 4 ռ., երեք ամս. 3. ռ. երկու ամս. 2 ռ. և մի ամս. 1 ռուբլ։

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետեւեալ հասցէով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

«Գոլոս» լրագրի յօդուածը։—Ներքին տեսութիւն։ Նամակ Ալէքսանդրապոլից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Ֆրանսիա։ Սերբիա։ Հրաւէր առ համայն ռուսիաբնակ ազգային։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Բանասիրական։ Դաւիթ բէկ։

«ԳՈԼՈՍ» ԼՐԱԳՐԻ ՅՕԴՈՒԱԾ

—

Ներկայ թուի № 6 մէջ ռուս «Голосъ» լրագիրը նուիրել է մի ընդարձակ առաջնորդող յօդուած որ մի մանրամասն տեսութիւն է կազմում 1880 թուին Ասիայում պատահած քաղաքական անցքերի։ Յօդուածը մեզ համար նրանով նշանաւոր է, որ նրա մէջ խօսվում է և հայոց խնդրի մասին, և այն էլ շատ որոշ և համակրական ձևով։

Նախ և առաջ ռուս լրագիրը խօսում է Ռուսաստանի յարաբերութիւնների մասին Չինաստանի հետ, յետոյ անցնում է առհասարակ ռուսաց քաղաքականութեանը Միջին-Ասիայում, մանրամասնաբար նկարագրում է և Անգլիայի քաղաքականութեան եղանակը Ասիայում, խօսում է այն անաջողութիւնների վրա, որ Անգլիան ունեցաւ անցեալ տարի Աւղանիստանում և վերջապէս անցնում է Պարսկաստանի մէջ 1880 թուին պատահած քաղաքական տխրալի անցքերի տեսութեանը։

Պարսկաստանի գրեթէ անընդհատ երկդիմի քաղաքականութիւնը և առհասարակ Պարսկաստանի թուլութիւնը, ասում է «Գոլոս» լրագիրը, հարկադրում են Ռուսաստանը ընդունել քաղաքականութեան մի նոր ձև այդ ասիական պետութեան վերաբերութեամբ։ Այդ պատճառով, ռուս լրագրի կարծիքով, վերջին ժամանակները Ռուսաստանի հարաւային սահմանագլուխ երկրի, Կովկասեան Փոխարքայութեան պարտաւորութիւնները առաւել բաղադրեալ դարձան։ Ուստի այդ պարտաւորութիւնները իրագործելու համար, աւելացնում է մայրաքաղաքի թերթը, հարկաւոր է համերաշխ և միանման գործողութիւն հաստատել կովկասեան վարչութեան և ռուսաց կենտրոնական կառավարութեան մէջ, որով կատարեալ սերտ կապ կը կապվի այդ գործողութիւնների և Ռուսաստանի ընդհանուր ասիական քաղաքականութեան վերաբերեալ ուրիշ խնդիրների մէջ։ «Պարկաստանի ակներև քայքայվելը և թիւրքաց իշխանութեան թուլանալը Փոքր-Ասիայում, անտարակոյս պէտք է նոր տեղական քաղաքական խնդիրներ առաջ մղեն, ինչպէս օրինակ քիւրդերի խնդիրը և մի աւելի նշանաւոր խնդիր,—այն է հայոց խնդիրը, որի վրա առանձին ուշադրութիւն պիտի դարձնվի։»

«Հայոց ազգը, շարունակում է ռուս թերթը, որ ունի իր պատմութիւնը, իր գրականութիւնը, իր անցեալի յիշատակներն ու արձանները, մի ազգ, որ պարունակում է իր մէջ մեծ կենսական ոյժեր, անկասկած իրաւունք ունի անկախ գոյութեան վրա։ Մի նոր հայոց պետութեան ստեղծելը մեր Անդրկովկասի հարևանութեամբ, ունի մի մեծ շահ Ռուսաստանի համար»։

Վերջացնելով իր յօդուածը «Գոլոս» լրագիրը ասում է որ անցեալ տարուց սկսած ասիական ազգերը մի նշանաւոր քայլ արին ընդհանուր մարդկային կեանքի հետ միանալու ճանապարհի վրա։ Վիճակը ընտրել է երկու պետութիւններին, Ռուսաստանին և Անգլիային, Ասիայի և Եւրոպայի մէջ միջնորդների դերը կատարելու համար։ Այդ պատճառով ցանկալի է որ այդ երկու մեծ պետութիւնները ասիական քաղաքականութեան վերաբերութեամբ ձեռք ձեռքի տուած ընթանային և նրանց երկուսի մէջ համաձայնվելը այդ միջնորդների դերում, ներկայացնում է ներկայ տարվայ քաղա-

---

ԴԱՒԻԹ ԲԷԿ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

(1722—1728)

—

ԺԴ.

Առաւօտեան չալաբեանների ամբողջ ցեղի մէջ լուր տարածվեցաւ, թէ մէլիք Ֆրանգիւլը ընդունել է մահմեդականութիւն. բոլորը հետաքրքրվում էին, բոլորը ուրախանում էին, որ հայերից մի այդպիսի նշանաւոր մարդ մտաւ իսլամի գիրկը, և հաւատացած էին, որ շատերը կը հետևեն նրա օրինակին։ Այդ միջոցին Սիւրին դեռ նոր էլ զարթել, և փաթաթված մետաքսեայ նուրբ սփածանելիքի մէջ, նստած էր իր վրանում, գորգի վրա։ Նա պատահած անցքից տեղեկութիւն չունէր։ Աղախինը բերել էր նրա մօտ փոքրիկ երեխային, որի հետ խաղում էր գիշատ մայրը։ Ֆաթիման—այդպէս էր երեխայի անունը—այս առաւօտ սովորել էր մի նոր հնարք իր աղախնից. երբ աղլուխը չարժում էին նրա առջև, նա բաւական ծաղրական երես չինելով, արտասանում էր. «աու... աու...»... Այդ շաւական զուարճացնում էր դժբախտ մօրը։

Այդ միջոցին տխուր, բազմահոգ դէմքով մտաւ Սիւրիի վրանը ներքինապետ Ահմէդը։ Նրա սովորութիւնները այն աստիճան ծանօթ էին տիկնոջը, որ տեսնելով Նրան վատ տրամադրութեան մէջ, իսկոյն հարցրեց։

—Ի՞նչ է պատահել։

—Շատ վատ բան, պատասխանեց ծերունին և սկսեց պատմել բոլորը ինչ որ լսել էր մէլիքի մասին։

Ժողովրդի ֆանատգիան արդէն տուել էր անցքին բոլորովին գերբնական կերպարանք։ Պատմում էին, թէ մէլիքը հրեշտակների թեքերի վրա տարվել էր մինչև հինգերորդ երկինքը. այնտեղ խօսակցութիւն էր ունեցել Մուհամմէդի և Ալիի հետ. յետոյ ցոյց էին տուել Նրան դրախտը ու դժոխքը, ասել էին՝ դրանցից որը կամենում ես ընտրիր։ Մէլիքը ընտրել էր դրախտը։ Ցած գալով երկնքից, նա անմիջապէս գնացել էր իմամի մօտ։ Իմամը նրա երեսի վրա լոյսի ճաճանչներ էր տեսել, և նրա առջևը ընկնելով երկրպագութիւն էր տուել։ Յետոյ Նրան նստացրել էր իր տեղը, և ինքը նստել էր Նրանից ցած, ասելով, թէ «ինձ պէտք է քեզ սպասաւորութիւն անել, դու աւելի սուրբ ես, քան թէ ես»։ Յետոյ իմամը հրամայել էր, որ ընթրիք տան, բայց ընթրիքը ուշացրել էին։ Այդ ժամանակ մէլիքը «սալավաթ» *) էր քաշել երեսին, և նոյն վայրկեանում երկնքից ցած էր իջել մի սեղան լի ամեն տեսակ անուշահամ կերակուրներով և այլն։

—Այդ բոլորը հին հեքեաթներ են, ծերունի ներքինապետի խօսքը կտրեց Սիւրին,—դու այն ասա, մէլիքը այժմ որտեղ է։

—Նա գտանվում է իմամի մօտ, պատասխանեց ծերունին խռովեալ ձայնով. — այսօր պիտի կատարվի նրա թլփատութեան խորհուրդը, և խանը ինքը յանձն է առել քրիվայի (կընքահայրի) պաշտօնը։

—Կը նշանակէ, մէլիքի մահմեդականութիւն ընդունելը շատ մօտ է խանի սրտին։

—Ցարակոյս չը կայ, այդ անհաւատները ոչինչ բանով այնքան չեն ուրախանում, որքան ուրախանում են, երբ տեսնում են, որ մի մարդ ընդունում է իրանց կրօնը։

Տիկինը ընկաւ դառն մտածութիւնների մէջ։ Նրա քնքոյշ, կրօնական ջերմեռանդութեամբ լի սրտի վրա խիստ ծանր տպաւորութիւն գործեց ներքինապետի պատմութիւնը։ Նա աղլուխը տարաւ աչքերին և խուլ կերպով սկսեց հեկեկալ։ Աղլուխը տեսնելով, փոքրիկ Ֆաթիման կրկնեց իր սովորական երդը. «աու... աու...» Այս անգամ փոքրիկ աղջկայ թոթովմունքը մի առանձին ուրախութիւն չը պատճառեց մօրը։ Նա հրամայեց աղախնին դուրս տանել երեխային։

—Ի՞նչ ես կարծում, Ահմէդ, հարցրեց նա, երբ փոքր ինչ հանգստացաւ իր վրդովմունքից,—այդ որ սատանան մոլորեցրեց մէլիքին, ինչ նպատակ կարող էր ունենալ նա իր վարմունքի մէջ։

—Նպատակը շատ պարզ է, տիկին, պատասխանեց ծերունին հանդարտութեամբ.—մէլիքը դիմել էր խանին և խնդրել Նրանից Դենուաղի ու Բարգիւշատի կառավարութիւնը։ Խանը մերժել էլ։ Այժմ պէտք էր մէլիքին մի լաւ միջնորդ, որ խանի վրա ազդէ և իր նպատակը կատարել տայ։ Նա գտաւ իմամին։ Բայց այդ մոլեռանդ կրօնաւորին դրաւելու համար, պէտք էր Նրան մի բանով կաշառել. և ոչինչ կաշառք այնքան թանդագին չէր կարող լինել Նրա համար, որպէս մահմեդականութիւն ընդունելը։—Բայց ես լսում եմ մի ուրիշ բան ես։

—Ի՞նչ բան, հարցրեց անհամբերութեամբ տիկինը։

—Ասում են՝ մէլիքը խոստացել է իմամին կնութեան տալ իր աղջիկը։

—Նա նոյնն է անում, ինչ որ արեց իմ ուրացող հայրը... խօսեց տիկինը դառնութեամբ.—սխալ Նրա աղջիկը շատ փոքր է, դեռ ութն տարեկան է։

—Բիչ է պատահում, որ դրանից աւելի փոքր հասակով աղջիկներ առնվում են մահմեդականների հարեմխանաներում։ Ջեզ յայտնի է, տիկին, որ այդ անհաւատները մի ուրիշ բարեպաշտութիւն են համարում իրանց տունը լցնել բազմաթիւ կնիկներով։ Զարմանալին այն չէ, որ աղջիկը փոքր է, զարմանալին այն է, որ Նրա հայրը տալիս է մի փոքր, մաչված ծերուկի, որ իր բոլոր յոյսը դրել է մի խաբեբայ դէրվիշի «մաջուններին» վրա, որ Նրանով վերադարձնէ իր մանկութիւնը։

Տիկինը դարձեալ ընկաւ մտածութիւնների մէջ։ Հանգամանքները շատ վատ փոփոխութիւն ստացան։ Եթէ գործը կախված լինէր իրանից միայն, դուցէ նա կարող կը լինէր ամեն կերպ դարձնել։ Բայց այժմ գործի մէջ խառնվեցաւ մի հզօր անձն—իմամը, որին ամբողջ ցեղը պաշտում էր, որից ինքը խանը դողում էր։ Ինչ կարելի էր անել նրա հետ։ Նա ինչ որ խնդրելու լինէր խանից, վերջինս չէր կարող չը կատարել. հակառակ դէպքում, մի խօսքով ամբողջ ցեղը կապստամբացնէր նրա դէմ։ Մահմեդա-

*) Սալավաթը մահմեդականների մօտ փոխարինում է այն արարողութեանը, որ քրիստոնեաները կատարում են երեսը խաչակնքելով։

քական խնդիրների ամենանշանաւորներից մինը։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ

—

Յունվարի 5

Որքան դաւն սպասաւորութիւն է գործում մարդու վրա, երբ նա մի փոքր ուշադրութեամբ կարդում է մեր պարբերական հրատարակութիւնները և մտածում նրանց ներկայ դրութեան վրա։ Կիրք, անձնականութիւն, բարկութիւն, չար նախանձ, հայհոյանք,—ահա սրանք են նրանց ներկայ նշանաբանը։ Մեր հասարակական գործիչները, մեր լուսաւորված, բարձր ուսում ստացած անձնաւորութիւնները, մեր այսպէս ասած, մտաւոր և բարոյական զարգացման առաջնորդները չար նախանձից թելադրված՝ այժմ լրագրութիւնը իրանց անսանձ կրքերի և անձնական թշնամութիւնների զէնք են շինել հակառակորդին վերք տալու համար։ Նրանք չեն պատկառում իրանց կոչումից, չեն խնայում մինչև անգամ հասարակական այդ ամենակարևոր, ամենասուրբ հիմնարկութիւնը ապականել իրանց տմարդի և գազանային վարմունքով, վայր գցել նրանց վարկը օտար ազգերի առջև և այդպիսով ցոյց տալ լուսաւորված ազգերին մեր ազգի մտաւոր և բարոյական զարգացման ստոր աստիճանը...

Մենք համոզված ենք, որ մի ընթերցող, եթէ մի փոքր լուրջ մտօք է հետևում և քննում մեր մամուլի այժմեան ընթացքը, ուղղակի կարող է ասել, որ, չնորհիւ մի յետադէմ և խաւար մամուլի, լրագրութիւնը այժմ «մուշտիկուի» ասպարէզ է դարձել։ Այո, վերջացաւ Թիֆլիսում իսկական մուշտիկռիւը, հանդէս եկաւ այժմ գրականական մուշտիկռիւը, միայն այն զանազանութեամբ՝ որ առաջինում մասնակցում էին անկիրթ, անուս, գազանաբարոյ կենտաւներ, իսկ այժմ—ինչպէս ճշմարիտ նկատում է «Մշակը», ուսում առած կենտաւներ։

Այդ ուսում առած կենտաւները փոխանակ քննելու գրուածքը, ցոյց տալու նրա սխալ և ուղիղ կէտերը, փաստերով հերքելու նրա մէջ արած դատողութիւնները, նրանք իրանց պարտականութիւն են համարում իրանց ամենաազտոտ միջոցներով և ձևերով չօշափել այդ գրուածքի հեղինակի պատիւը, արձանագրել նրա վարած կեանքի ձևերը, հիմնվելով այն տղայական և խայտառակ կարծիքի վրա, որը այս մօտ օրերումս յայտնեց «Մեղուի» մէջ մի իրաւաբան։

Մենք երբէք չէինք կարող սպասել այդպիսի լիրը և մի և նոյն ժամանակ լոգիկայից զուրկ դատողութիւններ բարձր ուսում ստացած անձնաւորութիւններից, կարծելով որ նրանք գէթ հասկացած կը լինեն գրականութեան վսեմ նշանակութիւնը, բայց դժբաղդաբար մենք սատիկ սխալված տեսանք մեզ մեր կարծիքների մէջ, երբ միմեանց ետևից հանդէս եկան մի քանի բարձր ուսում ստացած պարոններ և սկսեցին վայր ի վերոյ գրուածքներով լցնել խաւար լրագրի թերթերը։ Այդօրինակ գրուածքները, կարծես, ցոյց են տալիս, որ խմբագիրը կամենում է մի նոր ուղղութիւն տալ իր թերթին,—այն է որ եթէ մէկը կը հաւարձակի դատողութիւն տալ նրա գործունէութեան մասին, իսկոյն և եթ կը նկարագրվի իր թերթի մէջ նրա կեանքը, և այդպիսով նա պատժած կը համարվի այն մարդուն, որ յանդգնել է ցոյց տալ նրա գործունէութեան սխալ և վատ կողմերը։ Այդպէս ահա լոյս է տեսնում «Մեղուի» 94 համարում Ալէքսանդրապօլից մի նամակ, որը կրում է բարձր ուսման հռոմ առած մի անձնաւորութեան Ֆ. Օ. կնքած տասրագրութիւնը։ Այդ Ֆ. Օ. նամակագիրը փոխանակ քննելու մեր գրուածքը, ցոյց տալու մեզ նրա մէջ արած դատողութիւնների սխալ կէտերը, ուղղակի սկսել է գրել մեր կեանքի նկարագիրը, մեր ուսման աստիճանը, յայտնելով այն միտքը թէ ինչպէս կարող է մի մարդ հրատարակաւ յայտնել իր կարծիքը մի որ և է հարցի վերաբերութեամբ, երբ նա չէ վերջացրել իր ուսման ընթացքը բարձրագոյն դպրոցների պատերի մէջ։ Պ. Ֆ. Օ.-ի կարծիքով միայն այն մարդը կարող է դատողութիւն տալ որ և է մի հարցի վերաբերութեամբ, որը համալսարանի մօտից անցած և նրա հռոմը առած կը լինի, և եթէ այդ մարդը սխալ էլ գործի, այնու ամենայնիւ յարգելի պիտի լինի այդ սխալը պ. Ֆ. Օ.-ին, որովհետև այդ սխալ գործողը իր նման բարձր ուսում ստացած անձն է... Այսպիսի դատողութիւններ լսելուց յետոյ, մենք հետևաբար պիտի զանք այն եզրակացութեանը, որ եթէ մի որ և է հիմնարկութեան, մի որ և է հասարակութեան զեկավարը մի բարձր ուսում ստացած անձն է և թէ որքան էլ նա սխալներ գործի, որքան էլ վնասներ հասցնի այդ հիմնարկութեանը, այդ հասարակութեանը,—այնու ամենայնիւ մենք յարգելի պիտի համարենք նրա սխալները, նրա հասուցած վնասի դէմ չը պիտի բողոքենք, որովհետև նա բարձր ուսում առած անձն է... Ահա լոգիկա, առողջ դատողութիւն... Այդ է պատճառը, որ պ. Ֆ. Օ. իր նամակի մէջ յայտնում է թէ՝ ինչպէս կարող է մի թերուս պատանի, որ հոր խանութի մէջ ուսումնասիրում է մարդկերանց հոգիները (մանաւանդ ձերը, պ. Ֆ. Օ.), նոր կլուբ բացողների համար զեկավար որոշել, քաղաքագլխութիւնը սրան կամ նրան յանձնելը, վերք է եղել պ. Ֆ. Օ.-ին, որ մենք յանդգնել էինք «Մշակի» միջոցաւ զգուշացնել պարոնին իր ձգտումներից, որ մենք, ոչ թէ կլուբ, ինչպէս ասում է պարոնը, այլ մատենադարանը բանալու համար իրան նշանակութիւն չէինք տուել և զեկավար էինք ընտրել պ. Արիստոդոմ Յովհաննէսեանցին։ Վայ այն հասարակութեանը, որ ձեզ պէս բարձր ուսում ստացած զեկավարներ պիտի ունենայ, պ. Ֆ. Օ., վայ այն ազգին, որ յոյսը դրել է այնպիսի հիւանդ դատողութիւնների տէր առաջնորդների վրա և իր փրկութիւնը այդպիսիներից է սպասում... Այս ինչ խայտառակ միջոցի են ձեռք գցել մեր բարձր ուսում առած պարոնները։ Ի՞նչ կապ կայ, ասացէք խնդրեմ, մի մարդի գրուածքի և նրա կեանքի մէջ. որ գիտութեան մէջ կայ այդպիսի մի խայտառակ ձև, որ ընդունված լինի գրականական ասպարէզում վիճաբանող կողմերի մէջ։ Ի՞նչ կը լինէր, եթէ ես սկսէի գրել Ֆ. Օ.-ի թէ անցեալ և թէ մանաւանդ ներկայ կեանքի նկարագիրը։ Բայց մենք թոյլ չենք տայ մեզ այդ ստոր ճանապարհով գնալ և նոյն զէնքով պատասխանել մեր հակառակորդներին, միայն պարտականութիւն ենք համարում մի թեթև քննողական հայացք գցել այդ բարձր ուսում առած պարոնի նամակին, որ իրան գաղափարատէր և մտաւորապէս զարգացած մարդ համարելով (որովհետև նա կարողացել է աւարտել աչքակապութեան ուսումը բժշկական ֆակուլտետում) մեզ թերուս պատանի է համարում։

Բացի այն լիրը սուերից, որ յօրինել է պարոնը մեր անձնաւորութեան վերաբերութեամբ, իրրև թէ մենք ցանկացել ենք տեղւոյս վիճակային հոգևոր դպրոցի պատրաստականներում հայերէն լեզուի դասատու լինել*), որ և անընդունակ գտնվելով չընդունվեցանք,—նա սկսում է նկարագրել մեր այժմեան պարապմունքը, որը, պարոնի կարծիքով, արատաւորում է մեր պատիւը։ Արդեօք ո՞րն է լաւ. պարապել անձնական գործերով և մի և նոյն ժամանակ անտարբեր չը մնալ հասարակական և ազգային հարցերում, թէ՞ բժշկական գիտութիւնից և հմտութիւններից զուրկ տիտղոսով մտնել խաւար հասարակութեան մէջ, թող փչել նրա աչքերը, միայն նիւթական չահերի ետևից ընկնել, հարկաւոր եղած ժամանակ բոլորովին անպէտք լինել, անուշադիր թողնել ստանձնած պաշտօնը և միայն ջանալ ամեն միջոցներով գրաւել տգէտ ամբոխը քաղաքագլխի աթոռը ձեռք բերելու համար. ո՞րն է լաւ...

Մենք զարմանում ենք, որ հիւրընկալութիւն են գտնում լրագրի մէջ այնպիսի նամակներ, որոնք մէկ կողմից պարզապէս ցոյց են տալիս թէ՝ որքան խակ և հիւանդ կարծիքների տէր մարդիկ են թէ հեղինակը և թէ ինքն խմբագիրը։—Այժմ, երբ աշխատում են «Մեղուն» ամենօրեայ դարձնել, մինչ նրա պրոգրամը բաղկացած կը լինի ոչ թէ ազգային, քաղաքական և բանասիրական տեսութիւններից, այլ զանազան մարդկանց կեանքերի նկարագիրներից, որոնց հեղինակները հարկաւ պիտի լինեն միայն «ուսում առած կենտաւները»։ Ուրեմն յաջողութիւն ենք ցանկանում այդ տեսակ լրագրին։ Իսկ «Մշակը», մեր կարծիքով, աւելի լաւ արած կը լինի, եթէ միանգամայն արհամարհի իր անամօթ հակառակորդներին և բոլորովին անուշադիր թողնի նրանց ձայնը։

Սմբ. Պարսամեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ հեռագրում են յունվարի 24-ից հետևեալը։ «Երէկ քաղաքային Դուման որոշեց գեներալ Տէր-Ղուկասովի յիշատակը յաւերժել նիստի ժամանակ ձայնաւորների վեր կենալով, բացի սորանից հոգեհանգիստ կատարել հանգուցեալի յիշատակին և «Գուբերնսկայա» ասված փողոցը այսուհետև անուանել «Տէրղուկասովսկայա» փողոց։ Նոյնպէս վճռվեցաւ ցաւակցութեան հեռագիր ուղարկել հանգուցեալի եղբօրը։»

—

Յունվարի 14-ից մեզ գրում են Թէմիր-Խանշուրայից որ օրիորդական գիմնազիայում սկսվեցաւ հայերէն լեզուի դասատուութիւն։ Թէպէտ մինչև այժմ էլ կային կրօնագիտութեան դասեր չարաթը երկու անգամ, բայց որովհետև հայոց լեզուի համար առձիկ չը կայ նշանակված, այդ պատճառով կրօնուսոյց քահանան էլ չէր գնում հայերէնով պարապելու։ Իսկ այժմ պ. Սիմէոն Կորժենեանց յանձն առաւ ձրի, չարաթ երկու անգամ հայերէն լեզուից պարապելու օրիորդների հետ։ Առ այժմ աշակերտուհիները եօթն են։ Նոյն տեղից մեզ գրում են, որ մինչև յունվարի 10 լաւ եղանակ էր անում, իսկ այժմ սատիկ ցուրտ է լինում և ձիւնը չարունակում է գալ։

—

Մեզ հաղորդում են, որ յունվարի 21-ին Թիֆլիսի Հալաբար թաղում գտնված Էջմիածնեցոց եկեղեցու դուռը կոտրել են անյայտ աւազակները, տարել են 3 հատ սկիհ և գանձանակի մի քանի փակված արկղներ։

---

*) Մինչ պարոնի նամակը կարդալուց յետոյ չեն ամաչեցնում նրան պ. պ. տեսուչը, Մ. Աբրահամեանցը, տէր Մինաս քահանան և նոյնպէս հոգաբարձու Հայկազունին, որոնք իրանք էին գալիս ինձ մօտ և առաջարկում ռուսաց լեզուի դասատուութիւնը, բայց ես չէի կարողանում համաձայնվել նրանց առաջարկած պայմաններին։

դժուար էր իրագործել նրանց։ Տիկնոջ կարծիքով, աւելի հեշտ էր մահմեդական բռնապետի ձեռքից կորզել այդ երկիրները, քան թէ մի ուրացող հայից, որ մահմեդականի ձեռքում գործիք դառնալով, պիտի աշխատէր ամեն տեսակ ցած, անազնիւ և նենգաւոր հնարներ գործ դնել մահմեդականի իշխանութիւնը հայ երկրների վրա պահպանելու համար։ Այդ հանգամանքները ի նկատի առնելով, տիկինը մէլիք Ֆրանգիւլի ուրացութիւնը աւելի վտանգաւոր էր համարում, քան թէ իր հօրը, մանաւանդ որ նա խոստացել էր իր աղջիկը խմամին կնութեան տալ։

—Այդ առաջին անգամը չէ, տիկին, որ նա ընդունում է մահմեդականութիւնը, ասաց Ներքինապետը ընդհատելով Սիւրմի լուռ մտածութիւնները.—մէլիք Ֆրանգիւլը իր մանկութեան հասակում գերի ընկաւ և տարվեցաւ Պարսկաստանի Սպահան քաղաքը։ Այնտեղ Սպահանի արքայազուններից մէկը որդեգրեց նրան, և մի իմաստուն մօլլայի յանձնելով, կրթեց արաբական և պարսկական լեզուների դպրութեան մէջ։ Յետոյ իր աղջիկը նրան կնութեան տալով, նշանակեց նրան Սպահանի հայոց թաղի (Նոր Ջուղայի) բեգլէր—բէյլի։ Այնուհետև նա Սպահանի նահանգում հայոց Քաղաչ և Քամարա գաւառների կառավարիչը դարձաւ։ Այդ բոլոր պաշտօնների մէջ տանջելով, կողոպտելով ժողովրդին, մեծ հարստութիւն դիպեց։ Սպահանի հայերը այն ժամանակ առևտրական ընդարձակ յարաբերութիւններ ունենալով Հնդկաստանի հետ, իրանց կաշառքներով առատ վարձատրում էին նրան։ Բայց չարագործը հանգիստ չը մնաց։ Նա դաւաճանեց մինչև անգամ այն պետութեանը, որի չնորհիւ այնքան բարձր աստիճանի էր հասել։ Գաղանի կերպով միանալով Լօռի և Բախտեարի կոչված վայրենի ցեղերի ղլխաւորների հետ, նա պատրաստեց մի սարսափելի ապստամբութիւն պարսից կառավարութեան դէմ։ Նրա նպատակն էր յիշեալ վայրենիների աջակցութեամբ Սպահանի նահանգի հայաբնակ գաւառները անկախ դարձնել պարսից պետութիւնից, որ ինքը կարողանայ ժառանգաբար իշխել։ Բայց ապստամբութիւնը զսպվեցաւ և նա փախաւ, գնաց Հնդկաստան։ Երկար ժամանակ անյայտութեան մէջ մնալով, վերջապէս վերադարձաւ իր հայրենիքը և կրկին ընդունեց քրիստոնէութիւնը։ Այստեղ, ի հարկէ, ոչ ոք չէր կարող գիտենալ, թէ ինչ էր կատարել նա հեռաւոր արևելքում, և ընդունեցին նրան որպէս մի մարդ, որին բաղդը յաջողացրել էր վերադառնալ գերութիւնից։ Եւ նա ինքը իր անցեալի մասին պահում էր խորին ծածկամտութիւն։

—Իսկ դու որտեղից գիտես այդ բոլորը, հարցրեց տիկինը զարմանալով հետաքրքիր պատմութեան վրա։

—Ինձ հաղորդեց մի դերվիշ, որ բնակվում է խմամի մօտ, նա ինքը սպահանցի է, և ականատես է եղել բոլոր անցքերին։ Նա շատ լաւ մարդ է, և ինչպէս երևում է, մէլիքի այժմեան վարմունքը նրան ևս տհաճութիւն է պատճառել։

—Ես նրա մասին լսել եմ, ասում են՝ լաւ բժիշկ է։

—Նա ամեն բան գիտէ, ինչ ասես, որ նա չը գիտենայ։

—Բայց մի փոքր խաբեբայ է։

—Ես էլ առաջ այդ կարծիքն ունէի նրա մասին, տիկին, մանաւանդ երբ տեսնում էի, որ անդադար գոնարներ է պահանջում խմամից նրա համար «մաջուն» շինելու, և մտածում էի, որ այդ թանգագին իրեղէնները առաւելապէս իր գրպանի համար է։ Բայց նա պարզ խոստովանվեցաւ ինձ, թէ «բժշկութիւնը պարսիկների մէջ պէտք է ծածկված լինի գերբնական քողով, և այդ աւելի ներգործում է նրանց երևակայութեան վրա։ Հասարակ բանին նրանք նշանակութիւն չեն տալիս։ Եթէ ես ասէի խմամին, թէ քո դարմանները պիտի պատրաստեմ այս և այն խոտից կամ արմատից, նա ոչնչի տեղ կընդունէր, բայց ալմասը, մարգարիտը, եագուտը և այլն, կարող են ազդել խմամի մտահաստատութեան վրա։—Առհասարակ, աւելացրեց Ներքինապետը,—ես այդ մարդու մէջ գտնում եմ մի խորտրդաւոր գաղտնիք, որը նա ամենայն զգուշութեամբ թաքցնում է։

—Դերվիշները միշտ այդպէս են լինում, պատասխանեց տիկինը անուշադիր կերպով և կրկին ընկաւ մտածութիւնների մէջ։

—Իսկ ես դերվիշի պատմութիւնից կամենում եմ մի օգուտ քաղել, դուք ինչ խորհուրդ կը տաք, տիկին։

—Ի՞նչ օգուտ կարելի է քաղել։

—Ես կամենում եմ գնալ խանի և խմամի մօտ, յայտնել նրանց մէլիքի անցեալը,—յայտնել թէ ինչ էր արել նա Սպահանի կողմերում, յայտնել նրա դաւաճանութիւնները պարսից կառավարութեան դէմ, յայտնել, որ նա մի վատ խաբեբայ է, թէ նա այդ երկրորդ անգամն է, որ ընդունում է մահմեդականութիւն, դարձեալ

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

Հետևեալ տեղեկութիւնները կարդում ենք լրագիրների մէջ Ֆրանսիական քաղաքային խորհրդարանի անդամների ընտրութեան մասին։

Խորհրդարանական ընտրութիւնների ժամանակ, որոնք կատարվեցան Ֆրանսիայի մէջ յունվարի 4-ին, յաղթող հանդիսացաւ օպորտիւնիստ անուանված հանրապետական մեծ կուսակցութիւնը, որի առաջնորդը Գամբետտան է։ Փարիզի մէջ 22 քուէարկվածներից 21 հանրապետականներ ընտրվեցան, 1 պահպանողական և ոչ մի անհաշտ կոմունար։ Հանրապետական մամուլը այդ առիթով յայտնում է իր ուրախութիւնը և նախագուշակում է, որ Ֆրանսիական ազգային ժողովների ապագայ ընտրութիւնների ժամանակ էլ հասարապետականները դարձեալ յաղթող կը հանդիսանան։ Գամբետտայի ,,République Française" լրագրի կարծիքով, խորհրդարանական ընտրութիւնները ապացուցանում են, որ Ֆրանսիան բաւական է այժմեան հանրապետական կառավարութենից և որ պահպանողական և արմատական կուսակցութիւնները կատարելապէս անզօր են։

Հանրապետականները պարծենում են և հպարտանում և նրանք իրաւացի են։ Հանրապետական կառավարութեան ժամանակ Ֆրանսիայի գործնական քաղաքականութիւնը գիտակցական, գեղեցիկ և խելացի էր։ Հանրապետական կառավարութիւնը գեղեցիկ կերպով կազմակերպեց երկիրը և նրան կատարելապէս հարստացրեց։ Ֆրանսիայի տնտեսական դրութիւնը եւրոպական միւս պետութիւններից ամենալաւն է։

Կառավարութեան արտաքին քաղաքականութիւնը ոչ օքի անհանգիստ չէ անում։ Ֆրանսիական կառավարութիւնը վերջին վեց ամիսների ընթացքում աշխատում էր վերադարձնել Ֆրանսիային նրա առաջնակարգ դիրքը եւրոպական պետութիւնների կարգում։

ԱՍԻԱ

Լրագիրների մէջ կարդում ենք հետևեալ տեղեկութիւնները իշխան Միլանի դահակալութեան մասին։

Իշխան Միլան յայտնում է սկուպչինային (ազգային ժողովին), որ Սերբիայի յարաբերութիւնները օտար պետութիւնների հետ բարեկամական են, ուրախութիւն է յայտնում այն բարեկամական ընդունելութեան համար, որ արին իշխանին Վիէննայի և Բերլինի մէջ և Ռուսաստանի հետ դիպլոմատիական յարաբերութիւնների սկսելու պատճառով։ Դահակալական ճառի մէջ ասված է, որ արտաքին քաղաքականութեան վերաբերութեամբ կառավարութիւնը կաշխատէ բարեկամական յարաբերութիւններ պահպանել միւս պետութիւնների հետ և գրաւել թէ նրանց և թէ արևելեան ժողովուրդների համակրութիւնը։ Իշխան Միլան յոյս ունի, որ Սերբիան շուտով համաձայնութիւն կը կայացնի Աւստրո-Հունգարիայի հետ առևտրական և երկաթուղիների հարցի վերաբերութեամբ։ Աւստրո-Հունգարիան իսկութեամբ կը կատարի երկաթուղիների գաշնակցութիւնը, որի հետ կապված են Սերբիայի պատիւը և շահերը։

ՀՐԱՒԷՐ ԱՌ ՀԱՄԱՑՆ ՌՈՒՍԻԱԲՆԱԿ ԱԶԳԱՅԻՆՍ

Հայոց Միացեալ Ընկերութիւնը Հայաստանի և Միջերկրեայ մէջ հիմնած քսան և հինգ վարժարանները, ընդ որս Վանայ վարժապետանոցը այլ և այլ գիւղերէ առնուած իւր գիշերօթիկ ձրիավարժ աշակերտներովը աւելի բարեկարգ վիճակի մը մէջ գնելու և սովուն երեսէն յառաջ եկած մեծագումար ծախուց թեթևութիւն մը ընծայելու համար, կը դիմէ այսօր համայն ազգին օժանդակութեան։

Ռուսիաբնակ հայ եղբարք, որոց համակրանքն ու քաջալերութիւնը վայելած եմք միշտ, անտարակոյս նոր փորձ մի ևս պիտի տան իրենց ազգասիրութեան, նպաստելով ընկերութեանս։

Այսու վստահութեամբ պատիւ ունիմք ներկայացնել Վասպուրականի վարժարանաց տեսուչ զպարան Մկրտիչ Փորթուգալեան, որ իբր լիազօր ներկայացուցիչ Հայոց Միացեալ Ընկերութեանց կուղևորի ի Կովկաս։

Պարոն Փորթուգալեան պիտի փութայ ձեռնարկել հանդանակութեանց, և այն ամեն միջոցներուն, զորս օգտակար և անհրաժեշտ կը դատէ իւր պաշտօնի գործադրութեան և յաջողութեան համար։

Սիրելի է մեզ յուսալ որ ռուսիաբնակ պատուարժան ազգայինք պիտի հաճին մեր իղձերն և ակնկալութիւնները իրականացնել, ինչպէս յանցելումն, և իրենց արդիւնաշատ նպաստներով ստատարեն ազգային մտաւորական վերակենդանութեան, որով անջնջելի յիշատակ մը պիտի թողուն հայ երիտասարդութեան սրտերուն և նախանձելի օրինակ մը պատմութեան մէջ։

Հայոց Միացեալ Ընկերութեան

Ցնօրէն ժողով։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 յունվարի։ Այսօր առաւօտեան 8 ժամին Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայևիչ իր ընտանիքով հասաւ Ս. Պետերբուրգ։ Նրան դիմաւորեցին կոմս Լորիս-Մելիքով, քաղաքապետը և այլ անձինք։

ԴՈՒԲԼԻՆ, 23 յունվարի։ Մի ժամանակ բանտից ազատված և պոլիցիական հսկողութեան տակ թողած, կալուածական միութեան կազմակերպող Գօվիա Նորից կալանաւորված է, որովհետև նա խանգարեց այն պայմանները, որոնցով բանտից ազատված էր։

ՓԱՐԻԶ, 23 յունվարի։ Պրուսիայի կողմից կառավարութեանը առաջարկած հարցը յունական խնդրի վերաբերութեամբ աւելի ամրացրեց Սենատորների դրութիւնը, որի խաղաղասիրական քաղաքականութիւնը պատգամաւորների ժողովի միաձայն հաւանութիւնը ստացաւ։

ՄՈՍԿՎԱ, 23 յունվարի։ Մոսկվայում վախճանվեցան. գրող Պիսեմսկի, բանաստեղծ Ֆէօդօր Մելլեր և պրոֆեսսոր Լեշկով։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 յունվարի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր. 37 կ., երկրորդ 93 ր. 25 կ., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 93 ր. 12 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 221 ր. 25 կ., երկրորդ 220 ր. 75 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 92ր.5կ., երկրորդ 91ր. 87կ., երրորդ 92 ր. 12կ., ոսկի 7 ր.84 կ.։ Ռուսաց 1 ր. Լոնդոնի վրա արժէ 25,19 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա 214 1/2 մարկ, Փարիզի վրա 265 1/2 Ֆրանկ։ Բօրսայի տրամադրութիւնը հանդիստ է։

ԴՈՒԲԼԻՆ, 24 յունվարի։ Ասասում են, որ պոլիցիան կարձակէ կալուածական միութիւնը և նրա դրասենեակը կը փակէ։

ԼՈՆԴՈՆ, 24 յունվարի։ Պարոնելի կուսակցութիւնը հրաժարվեց ընդդիմադրել ստիպողական օրէնքներին։ Երկրորդ ընթերցանութենից յետոյ համայնքների ժողովի մէջ Բրէդլաու առաջարկեց մերժել ստիպողական օրէնքների մտցնելը Իրլանդիայի մէջ։ Դիմաբանութիւնները հանդիստ էին և յետաձգված են մինչև երկուշաբթի օրը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 յունվարի։ Թագաւոր կայսրը գերազանցածներին ընծայեց սուրբ Գէորգի շքանշանը 3-դ կարգի հետևեալ անձանց. գնդապետ Սուրապակինին և Կաշելկովին, գնդապետի օգնական Գայդարովին այլակրօնների համար սահմանված շքանշան։ Գնդապետ Յեպրինսկուն և Յեկովին չորրորդ կարգի։

ՍԵՓԱԿԱՆ ԹՂԹԱԿՑԻՑ

ԵՐԵՒԱՆ, 26 յունվարի։ Երէկ ահագին բազմութեան ներկայութեամբ Սմթողիկոսից ուղարկած սինոդի անդամ Գրիգոր եպիսկոպոսը հոգեհանգիստ կատարեց գեներալ Տէր-Ղուկասովի յիշատակին։ Եկեղեցու երգեցող դասը բաղկացած էր ծխական հայ դպրոցների աշակերտներից և աշակերտուհիներից։

ԵՐԵՒԱՆ, 26 յունվարի։ Այստեղ հասան Վանից տեղեկութիւններ, որ Սամիհ-փաշան հրաժարեցրած է նահանգապետի պաշտօնից։ Կառավարութիւնը ըէգիմներ է ժողովում Յունաստանի դէմ ուղարկելու համար։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

խարելու մտքով։ Երբ խանը և իմամը կը գիտենան այդ բոլորը, նրան ոչ թէ Գենուազի ու Բարգիւչատի գաւառները կը յանձնեն, այլ գուցէ խեղդել կը տան։

—Բոլորովին հարկաւոր չէ այդ անել, պատասխանեց սիկինը հրամայական եղանակով.—դու կամենում ես մատնութիւններին մատնութիւնով պատասխանել։ Ես մէլիքի Սպահանի վարմունքի մէջ մի վատ բան չեմ տեսնում։ Մանուկ հասակում, գերի ընկնելով պարսիկների ձեռքը, նրան ընդունել են տուել մահմեդականութիւնը, նա ինչով է մեղաւոր։ Իսկ թէ նա, մնալով լօռիների և բախտիարլիների հետ, կամեցել է այնտեղ հայկական ազատ գաւառներ ստեղծել, և այդ մտքով ապստամբութիւն է յարուցել պարսիկների դէմ,—այդ նպատակը ամեն համակրութեան արժանի է։ Ո՞վ է իմանում, գուցէ նրա այժմեան վարմունքի մէջ ես մի այսպիսի նպատակ թաղված մնի։ Ես, իրաւ ասեմ քեզ, Ահմէդ, սկզբում սաստիկ վրդովվեցայ, երբ լսեցի մէլիքի մահմեդականութիւնը ընդունելը։ բայց դէրվիշի պատմութիւնը այժմ փոքր ինչ հանգստացնում է ինձ։ Ես չեմ կարծում, որ այսպիսակ մարդիկ, որոնք երբեմն մտածել և գործել են հայ ժողովրդի ազատութեան համար, կարող են չար մարդիկ մնալ։ Նրանք չար են երևում նրա համար միայն, որ նպատակին հասնելու մտքով գործ դրված միջոցների մէջ ընտրութիւն չեն անում։ Ամեն միջոց նրանց համար աւրբ է, երբ հասցնում է նպատակին։

—Այսուամենայնիւ, պատասխանեց ծերունին,—եթէ մէլիքի գիտաւորութիւնները բոլորովին արդար ևս համարելու լինենք (որի մէջ ես կասկածում եմ) դարձեալ Սուլթանոսը կը զրկվի Գենուազից։ Մէլիքը ինքը տէր կը դառնայ, իսկ նա ոչինչ չի ստանայ, բոլորը կը կորցնէ։

—Այժմ դժուար է նախագուշակել, թէ վերջը ինչ կը լինի...

—Ես այդ դէպքում կարող եմ ինձ կատարեալ մարգարէ համարել, պատասխանեց պարզ ծերունին բարկացած ձայնով.—դուք, տիկին, չափազանց բարեմտութեամբ էք դատում, ուր հարկաւոր էր փոքր ինչ կասկածանքով վերաբերվել դէպի կատարվող իրողութիւնը։ Ես մասամբ համաձայն կը լինէի ձեզ հետ, եթէ մէլիքը իր փառասիրութիւնը գոհացնելու համար իր ուժին տարեկան աղջիկը խոստացած չը լիներ փոած իմամին կնութեան տալ։ Մի մարդ, որ ծախում է իր աղջիկը, նա կը ծախէ և իր հայրենիքը և իր ազգը։ Ուրիշ օրինակներ պրտնել պէտք չէ, բաւական է, որ դուք յիշէք ձեր հօր վարմունքը։

Տիկնոջ և ներքինապետի խօսակցութիւնը ընդհատեց մի խառնաձայն աղմուկ, որ լսելի եղաւ հեռուից։ Հարեմխանայի բոլոր կնիկները, աղախինները դուրս թափվեցան իրանց չադրներից, մօտեցան սարայ-փէրդային, և ղլուխները բարձրացնելով, սկսեցին նայել։

—Այդ ինչ աղմուկ է, հարցրեց տիկինը անհանգիստ կերպով։

—Երևի, անցնում է թափօրը, պատասխանեց ծերունին ներքին խռովութեամբ.—դուք չէք կամենայ նայել նրա վրա։

—Ես այդ զլուխի հանդէսը տեսնել չեմ ուզում... ասաց տիկինը և երեսը շուռ տուեց։

Ծերունին, նկատելով նրա արտասուքը, հեռացաւ, և թողեց նրան միայնակ հաշվել իր սրտի ցաւերի հետ։

Հեռուից տեսնվում էր ահագին բազմութիւն, որ իմամի չադրների կողմից դիմում էր դէպի խանի չադրները։ Ամբոխը ստրով էր գնում, մէջն մի մարդ փառաւոր կերպով նստած էր զեղեցիկ զարդարած նժոյգի վրա, և բազմութեան առաջը ընկած, ամեն կողմից երևում էր։ Նա հագած ունէր թանգագին, ծիրանեգոյն վերարկու, նախշած ոսկէ թելերով, որ փողփողում էր արեգակի ճառագայթների տակ։ Գլա նոր մահմեդականութիւն ընդունած մէլիք Ֆրանդիլն էր, որ այժմ կոչվում էր Ալի բէկ։ Նա աջ ձեռքով բռնած ունէր մի մերկացրած սուր, որ դրել էր ուսի վրա։ Նոր կրօնի հետ նա ժառանգել էր նոր իրաւունք՝ սուր կրելու, որի գործածութիւնը Մուհամմէդը միացրել է իր աւանդած սրբազան պաշտամունքների հետ։ Նրա առջևից գնում էին մի խումբ չաւուշներ, որ եղում էին կրօնական երգեր։ Նրանցից մէկը տանում էր մի կանաչ դրօշակ, որի վրա նկարված էր շիաների խալիֆայի աջը։ Թափօրը դանդաղ էր ընթանում։ Ամեն քայլում ամբոխը կանգնեցնում էր նոր ուղղափառին, ոմանք համբուրում էին նրա ձեռքը, ոմանք նրա հագուստի փէշերը։ Կնիկները իրանց հիւանդ երեխաներին դնում էին այն ճանապարհի վրա, որ կողմից պիտի անցնէր նա։ Շատերը անց էին կենում նրա ձիու փորի տակով։

Այդ բոլորը կատարվում էր հոգևոր գնորքներ ընդունելու ակնկալութեամբ։ Ամբողջ բազմութեան մէջ տիրում էր մի տեսակ խորին, ջերմեռանդական զգացմունք, որ հասցնում էր մոռացութիւնը կրօնական վայրենի յափշտակութեան։ Ճանապարհի վրա մի քանի տեղ մատաղներ կտրեցին, մի քանի տեղ կանգնեցին մաղթանքներ կատարելու համար։ Կնիկները ծածկում էին ճանապարհը կանաչ ոստերով. թափօրը անցնում էր այդ կանաչապատ սփռոցի վրայով։

Խանի վրանը այսօր սովորականից աւելի զարդարած էր. նրա գանձարանից դուրս էին բերել ամենաբնտիր արծաթեղէն անօթները։ Այստեղ պիտի իմէին տուրբանութեան «Էրբէթը»։ Գեղեցկագէմ մանկաբիկները և ազատարների մի անգին խումբ, չքեղ կերպով հագնված, սպասում էին պատուելի հիւրերին։ Վրանում նստած էին խանը և իմամը միայն։ Երբ թափօրը մատեցաւ, նրանք երկուսն էլ դուրս եկան, կանգնեցին վրանի մուտքի մօտ ընդունելու նորընծայ մահմեդականին։ Խանը իր ձեռքով բռնեց և ցած իջեցրեց նրան ձիուց։ Խուռն բազմութիւնը շրջապատեց վրանի չորս կողմը։ Իմամը կարդաց մի կարճ աղօթք, յետոյ մտան վրանը։ Այնտեղ ընդունվեցան ցեղի նշանաւոր անձինքներից շատերը ուրախակից լինելու այն մեծ հանդիսին։

Այնօր չալարիանլիների ամբողջ ցեղը անցրեց ուրախութիւնով։ Բայց մի մարդ, որ նրանց մէջ չէր գտնվում, դա էր Ցամթի մէլիք Դաւիթը։ Նա առաւօտեան հէնց որ լսեց մէլիք Ֆրանդիլի վարմունքը, իսկոյն հասկացաւ, թէ ինչ խաղ խաղաց այդ մարդը իր դէմին, և սիրտը լի դառնութեամբ, առանց ոչ ոքի հետ տեսնվելու, նստեց իր ձին և գնաց դէպի Ցամթի, համոզված լինելով, որ այնուհետև Գենուազի ու Բարգիւչատի վրա մտածելը յիմարութիւն կը լինէր իր կողմից...

(Կը շարունակուի)